

Տեսակը	Կարգ	Տարբերակը	3.0
Հաստատող մարմինը	Խորհուրդ	Կարգավիճակը	Գործում է
Հաստատող արձանագրության և որոշման համարը	Թիվ 34 արձանագրություն Թիվ 84 որոշում	Ընդունման վայրը	ք. Սյեփանակերտ
Կիրառման շրջանակը	Գլխավոր գանձապետ, Ֆինանսական շուկաներում գործառնությունների, անկանխիկ դրամական հոսքերի և կանխիկի կառավարման, պրեմիում հաճախորդների ներգրավման ստորաբաժանումներ, ռիսկերի կառավարման ստորաբաժանում, հաշվարկային կենտրոն, հաշվապահական գործառնությունների, հաճախորդների սպասարկման ստորաբաժանումներ և մասնաճյուղեր, ԱՊԿԿ	Հաստատման ամսաթիվը	20.11.2018թ.
		Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	26.11.2018թ.
		Ուժը կորցնելու ամսաթիվը	

«Արցախբանկ» ՓԲԸ
Խորհրդի նախագահ՝

Ա. Սելեֆյան



«ԱՐՑԱԽԲԱՆԿ» ՓԲԸ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԿԱՐԳ**

	ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
Նախագիծը կազմող	Գլխավոր գանձապետ
Նախագիծը ստուգող	Ինովացիաների, ռազմավարության և մեթոդաբանության վարչություն Ռիսկերի կառավարման կենտրոն Իրավաբանական ծառայություն
Նախագիծը հավանության արժանացնող	Վարչություն

**«Արցախբանկ» ՓԲԸ Ֆինանսական շուկաներում գործառնությունների իրականացման
 կարգում կատարված էական փոփոխությունների վերաբերյալ**

Հ/Հ	Ներքին իրավական ակտում կատարված էական փոփոխությունների բնութագիրը
1.	Կարգի դրույթների համապատասխանեցում «Արցախբանկ» ՓԲԸ ներքին վարչակազմակերպական կառուցվածքի փոփոխություններին:
2.	Կարգում ներառվել են Բանկի կողմից նոր հետևյալ ներդրումային ծառայությունները. - Հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը և հաղորդումը, - Բանկի կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարումը, - Կորպորատիվ արժեթղթերի շուկայում պահառության գործառնությունները: Սահմանվել են վերոնշյալ ծառայությունների կատարման գծով պահանջները:
3.	Այլ՝ խմբագրական, հստակեցնող փոփոխություններ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հ/Հ	ԳԼՈՒԽՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԷԶ
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	4
2.	ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	5
3.	ԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՐԿԱՆ	8
4.	ԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒ ԸՆԹԱՅԱԿԱՐԳԸ	9
5.	ԿԱՐԳԸ ԿՐՈՂ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ	24

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Արցախբանկ» ՓԲԸ Ֆինանսական շուկաներում գործառնությունների իրականացման կարգը սահմանում է Բանկի կողմից ֆինանսական, այդ թվում՝ արժեթղթերի, արժութային և դրամային շուկաներում գործառնությունների իրականացման կանոններն ու պայմանները, Բանկի կողմից ֆինանսական շուկաներում գործառնությունների իրականացման գործընթացը և նշված գործընթացի հետ կապված այլ հարաբերություններ:

1.2 Կարգը հաստատվել է՝ հիմք ընդունելով՝

1) «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքը, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը.

2) ՀՀ ԿԲ Արտարժույթի առք ու վաճառքի, արժութային սվոփ, արտարժույթի կանխիկացման և ապականխիկացման գործառնությունների, Ռեպո և հակադարձ ռեպո գործարքների, Արտակարգ իրավիճակներում ռեպո գործարքների կնքման, ՀՀ ԿԲ կողմից դրամական միջոցների ներգրավման սակարկություններով գործարքների, ՀՀ ԿԲ կողմից ՀՀ պետական պարտատոմսերի առքի ու վաճառքի գործարքների իրականացման գլխավոր համաձայնագրերը, ՀՀ ԿԲ Դրամական միջոցների ներգրավման համաձայնագիրը.

3) ՀՀ ԿԲ ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում Ենթապահառուի գործառնությունների կատարման մասին պայմանագիրը.

4) ՀՀ ԿԲ Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները՝ Կանոնակարգ 4/07.

5) ՀՀ ԿԲ Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց հաճախորդների միջոցների պաշտպանության կանոնները՝ Կանոնակարգ 4/12.

6) ՀՀ ՊՊ թողարկման, տեղաբաշխման, շրջանառության, մարման սպասարկման կարգերը.

7) «Արցախբանկ» ՓԲԸ Ֆինանսական շուկաներում գործունեության քաղաքականությունը.

8) «Արցախբանկ» ՓԲԸ բանկային ռիսկերի կարգավորման և վերահսկման ներքին իրավական ակտերը:

1.3 Կարգում փոփոխություններ և/կամ լրացումներ կարող են կատարվել միայն Բանկի խորհրդի որոշմամբ՝ խորհրդի անդամների կամ Վարչության առաջարկով կամ գործող օրենսդրության պահանջով:

Կարգի հավելվածները, այդ թվում՝ Կարգի կիրառման համար անհրաժեշտ ձևաչափերը, պայմանագրերի տիպային ձևերը, Կարգում սահմանված գործառնությունների իրականացման գործընթացը մանրամասնող կանոնները հաստատվում են Վարչության կողմից:

Կարգը պետք է վերանայվի Բանկի գործունեության միջավայրի փոփոխությանը զուգընթաց, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

1.4 Կարգի նախորդ տարբերակներն են Խորհրդի՝ 18.12.2015թ. թիվ 193 որոշմամբ հաստատված ««Արցախբանկ» ՓԲԸ Ֆինանսական շուկաներում գործառնությունների իրականացման» կարգը և Խորհրդի՝ 23.06.2008թ. թիվ 104 որոշմամբ հաստատված ««Արցախբանկ» ՓԲԸ Պետական պարտատոմսերի շուկայում հաճախորդների սպասարկման» ընթացակարգը:

1.5 Կարգը ներքին օգտագործման փաստաթուղթ է և հասանելի է Բանկի ողջ անձնակազմին: Կարգի և դրա փոփոխությունների հասանելիությունն ապահովում է Բանկի մեթոդաբանության ստորաբաժանումը՝ Տեղեկատվական համակարգում այն տեղադրելու և ծանուցելու միջոցով:

2. ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1 Տերմիններ և հասկացություններ.

Բանկ՝ «Արցախբանկ» ՓԲԸ.

Կարգ՝ «Արցախբանկ» ՓԲԸ Ֆինանսական շուկաներում գործառնությունների իրականացման կարգ.

Բանկի խորհուրդ կամ **խորհուրդ՝** Բանկի կանոնադրությանը համապատասխան Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ձևավորված ընդհանուր կառավարման կոլեգիալ մարմին.

Բանկի վարչություն կամ **Վարչություն՝** Բանկի կանոնադրությամբ նախատեսված Բանկի կոլեգիալ գործադիր մարմին.

Բանկի վարչության նախագահ կամ **Վարչության նախագահ՝** Բանկի կանոնադրությամբ նախատեսված Բանկի միանձնյա գործադիր մարմին.

Ֆինանսական հաստատություն՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկեր, վարկային կազմակերպություններ, ներդրումային ծառայություններ մատուցող կազմակերպություններ.

Ստորաբաժանում՝ Ֆինանսական շուկաներում գործառնությունների ստորաբաժանում.

Դիլեր՝ Ֆինանսական շուկաներում Բանկի անունից և հաշվին գործառնություններ իրականացնելու համար համապատասխան որակավորում ունեցող Բանկի աշխատող.

Բրոքեր՝ Ֆինանսական շուկաներում Բանկի կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին գործառնություններ իրականացնելու համար համապատասխան որակավորում ունեցող Բանկի աշխատող.

Գլխավոր համաձայնագիր՝ Բանկի կողմից ֆինանսական հաստատությունների հետ կնքվող արտաբորսայական շուկաներում գործառնությունների իրականացման գլխավոր համաձայնագիր.

Միջբանկային գործարք՝ ֆինանսական հաստատությունների հետ կնքվող ցանկացած գործարք, որն իրականացվում է Գլխավոր համաձայնագրի կամ մեկանգամյա պայմանագրի հիման վրա.

Փոխանակման (Փոխարկման) գործարք՝ մեկ արժույթը մեկ այլ արժույթով փոխանակելու վերաբերյալ կողմերի միջև կնքվող գործարք.

Արտարժույթի միջբանկային փոխանակում՝ ֆինանսական հաստատության հետ արտարժույթի առք ու վաճառքի, ինչպես նաև կանխիկացման և ապականխիկացման գործառնություններ.

Արտարժույթի ներբանկային փոխանակում՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հաճախորդների հետ արտարժույթի առք ու վաճառքի գործարքներ.

Թող գործարք (tod, today)՝ արժութային փոխանակման գործարք, որի գծով վճարումներն իրականացվում են գործարքի կնքման օրը՝ գործարքի կնքման պահին ֆիքսված փոխարժեքով.

Թոմ գործարք (tom, tomorrow)՝ արժութային փոխանակման գործարք, որի գծով վճարումներն իրականացվում են գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրը՝ գործարքի կնքման պահին ֆիքսված փոխարժեքով.

Սփոթ գործարք (spot)՝ արժութային փոխանակման գործարք, որի գծով վճարումներն իրականացվում են գործարքի կնքմանը հաջորդող երկրորդ աշխատանքային օրը՝ գործարքի կնքման պահին ֆիքսված փոխարժեքով.

Սվոփ տոկոսադրույք՝ ՀՀ ԿԲ կողմից Արժութային սվոփ գործարքի վերաբերյալ հայտարարությունում նշված տոկոսադրույք կամ գործարքի կողմերի միջև նախօրոք պայմանավորված տոկոսադրույք.

Տոկոսային սվոփ՝ արտարժույթի/արժեթղթի առք/վաճառք՝ որոշ ժամանակ անց (մարման օրը) նույն արժույթը/արժեթուղթը միևնույն փոխարժեքով և ծավալով հետ վաճառելու/գնելու և դրա դիմաց Սվոփ տոկոսադրույքով հաշվարկված գումար (հատուցում) վճարելու պայմանով.

Փոխարժեքային սվոփ՝ արտարժույթի/արժեթղթի առք/վաճառք՝ որոշ ժամանակ անց (մարման օրը) նույն արժույթը/արժեթուղթը միևնույն ծավալով և գործարքի կողմերի միջև նախապես համաձայնեցված փոխարժեքով հետ վաճառելու/գնելու պայմանով.

Արժութային սվոփ ՀՀ ԿԲ հետ՝ Բանկի կողմից ներկայացված հայտի հիման վրա հաջորդական երկու գործարքների իրականացում, Բանկի և ՀՀ ԿԲ միջև ՀՀ դրամի և անկանխիկ արտարժույթի փոխանակում՝ որոշ ժամանակ անց նշված արժույթները միևնույն

ծավալներով հետ փոխանակելու և դրամի կամ արտարժույթի դիմաց Սվոփ տոկոսադրույքին համապատասխան գումար վճարելու պայմանով.

Ֆորվարդային գործարք (Forward)՝ արտարժույթային փոխանակման գործարք, որի փոխարժեքը ֆիքսվում է գործարքի կնքման պահին և կատարման ժամկետը գերազանցում է երկու աշխատանքային օրը.

Ջուպացում (netting)՝ միևնույն կատարման օրով գործարքներ իրականացնելիս կողմերի համաձայնությամբ նույն արժույթով փոխադարձ պարտավորությունների փոխհաշվանցում.

Գործակալ՝ Պետական պարտատոմսերի շուկայի մասնակից, որը թողարկողի և ՀՀ ԿԲ հետ կնքված պայմանագրով ստանձնել է ուղենշային պետական պարտատոմսերն իր անունից և իր հաշվին գնանշելու պարտավորություն.

Աճուրդ՝ պարտատոմսերի թողարկումների առաջնային տեղաբաշխման նպատակով կազմակերպվող մրցութային գործընթաց, որի ժամանակ պարտատոմս/արտարժույթ ձեռք բերելու/վաճառելու նպատակով գնորդները/վաճառողները ներկայացնում են հայտեր.

Արժեթուղթ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված արժեթղթեր.

Ռեպո գործարք՝ Արժեթղթերի առք ու վաճառքի գործարք, երբ Բանկը հանդես է գալիս որպես արժեթղթեր վաճառող՝ դրանք հակադարձ ռեպո համաձայնագրում նշված ժամկետում վաճառքի գնով հետ գնելու և սահմանված տոկոսագումար վճարելու պարտավորությամբ, իսկ հակառակ կողմը հանդես է գալիս որպես գնորդ՝ համաձայնագրում նշված ժամկետում պարտավորվելով դրանք հետ վաճառել Բանկին.

Հակադարձ ռեպո գործարք՝ Արժեթղթերի առք ու վաճառքի գործարք, երբ Բանկը հանդես է գալիս որպես արժեթղթեր գնող՝ դրանք ռեպո համաձայնագրում նշված ժամկետում առքի գնով հետ վաճառելու պարտավորությամբ, իսկ հակառակ կողմը հանդես է գալիս որպես վաճառող՝ համաձայնագրում նշված ժամկետում պարտավորվելով դրանք Բանկից հետ գնել և համաձայնագրով սահմանված տոկոսագումար վճարել.

Պեղական պարտավորումների հեղզնման աճուրդ՝ մրցութային գործընթաց, որի ընթացքում թողարկողը նախապես հայտարարված ծավալով հետ է գնում իր պարտատոմսերը.

Պեղական պարտավորումներ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից թողարկվող պետական (գանձապետական) կարճաժամկետ, միջին ժամկետայնության և (կամ) երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր.

Դեպո հաշիվ՝ հաճախորդներին պատկանող արժեթղթերի հաշվառման համար նախատեսված՝ ընդհանուր հատկանիշներով միավորված Բանկի գրառումների բազմություն (հաշիվ).

Արժեկտրոն՝ թողարկողի կողմից արժեթղթի սեփականատիրոջը, մինչև մարման օրը ներառյալ, թողարկման ամսաթվից հաշվարկված, նախապես սահմանված որոշակի պարբերականությամբ և եկամտաբերությամբ պարտատոմսի անվանական արժեքի դիմաց վճարվող տոկոսագումարն է.

Արտարժույթի կանխիկացում՝ Անկանխիկ արտարժույթի դիմաց կանխիկ արտարժույթի տրամադրում.

Արտարժույթի ապականխիկացում՝ Կանխիկ արտարժույթի դիմաց անկանխիկ արտարժույթի տրամադրում.

«Գործառնական օր» համակարգ՝ Բանկի հաշվապահական հաշվառման և հաշվետվողական ծրագրային համակարգ.

Բանկի մասնաճյուղ կամ **Մասնաճյուղ**՝ Հաճախորդների սպասարկման բաժին և Բանկի մասնաճյուղեր.

Հսկողական գործառնություններ իրականացնող ստորաբաժանումներ՝ Ներքին աուդիտ, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման ստորաբաժանումներ.

Բանկի ներքին իրավական ակտ՝ Բանկի կառավարման մարմինների կողմից հաստատված և Բանկում պարտադիր բնույթ ունեցող փաստաթուղթ.

Տեղեկարվական համակարգ՝ Բանկի ներքին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և տեղեկատվական համակարգ:

Կարգի հավելվածներում կիրառվող՝ Կարգով չսահմանված առանձին տերմինների և հասկացությունների նշանակությունը կարող է պարզաբանվել այդ հավելվածներով:

2.2 Հապավումներ.

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն.

ԱՀ՝ Արցախի Հանրապետություն.

ՀՀ ԿԲ՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ.

ՊՊ՝ Պետական պարտատոմս.

ՀՍՍ՝ Հաճախորդների սպասարկման սրահ.

ԱՊԿԿ՝ Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտե:

3. ԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՐԿԱՆ

3.1 Կարգի հիմնական նպատակներն են՝

1) Ֆինանսական շուկաներում Հաճախորդների գործարքների պատշաճ սպասարկում.

2) Ֆինանսական շուկաներում Բանկի գործառնությունների կանոնակարգում, ռիսկերի նվազեցման և կառավարման մեխանիզմների սահմանում:

3.2 Կարգի սկզբունքներն են՝

1) Ֆինանսական շուկաներում իրականացնել գործող օրենսդրությանը և Բանկի ներքին իրավական ակտերին համապատասխան գործունեություն.

2) Հաճախորդների և գործընկերների հետ գործել ազնիվ և անկողմնակալ՝ չխախտելով վերջիններիս շահերը և իրավունքները.

3) Ֆինանսական շուկաներում գործունեության ընթացքում կիրառել ռիսկերի մոնիթորինգի և կառավարման արդյունավետ մեխանիզմներ:

3.3 Կարգի առարկան է՝

1) Ֆինանսական շուկաներում գործառնությունների իրականացման ընդհանուր կանոններն ու պայմանները.

2) Արժույթային շուկաներում գործառնությունների իրականացման կանոններն ու պայմանները.

3) Թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորների առք ու վաճառքի իրականացման կանոններն ու պայմանները.

4) Արժեթղթերի շուկայում գործառնությունների իրականացման կանոններն ու պայմանները.

5) Դրամային շուկաներում գործառնությունների իրականացման կանոններն ու պայմաններն.

6) Ֆինանսական շուկաներում գործառնությունների վերաբերյալ գրանցումների վարման կանոնները և պայմանները:

4. ԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

4.1 Ֆինանսական շուկաներում գործառնությունների իրականացման ընդհանուր կանոններն ու պայմանները.

4.1.1 Բանկը Ֆինանսական շուկաներում գործառնություններն իրականացնում է Բանկի ֆինանսական շուկաներում գործունեությունը կանոնակարգող քաղաքականությամբ, Կարգով, բանկային ռիսկերի կարգավորման և վերահսկման ներքին իրավական ակտերով սահմանված, ինչպես նաև Բանկի իրավասու ղեկավարների/մարմինների կողմից հաստատված սահմանաչափերի պահպանմամբ:

4.1.2 Ֆինանսական շուկաներում գործառնություններն իրականացվում են Ստորաբաժանման՝ նշված գործառնությունների իրականացման համար համապատասխան հավաստագիր/լիցենզիա ունեցող աշխատողների կողմից:

4.1.3 Գործարքները կնքվում են ձայնագրվող հեռախոսներով և/կամ կապի այնպիսի միջոցներով, որոնց վրա անփոփոխ պահպանվում է բանակցությունների ձայնագրությունը:

4.1.4 Բանկն արտաբորսայական շուկաներում ֆինանսական հաստատությունների հետ գործառնություններն իրականացնում է Գլխավոր համաձայնագրի, ինչպես նաև

մեկանգամյա գործարքների համար նախատեսված կամ ֆինանսական շուկայի մասնակիցների կողմից ներկայացված համապատասխան պայմանագրերի հիման վրա:

4.1.5 Բանկը ՀՀ ԿԲ հետ գանձապետական գործառնություններն իրականացնում է ՀՀ ԿԲ հետ կնքված՝ տվյալ ոլորտը կանոնակարգող պայմանագրերի/ համաձայնագրերի հիման վրա:

4.1.6 Արտաքին շուկաներում գործառնությունները, որպես կանոն, կատարվում են ոչ ռեզիդենտ բանկերի, ֆինանսական կազմակերպությունների միջոցով՝ Բանկի և վերջիններիս միջև կնքված համագործակցության պայմանագրերի/համաձայնագրերի հիման վրա:

4.1.7 Հայաստանի ֆոնդային բորսայում գործառնություններն իրականացվում են Հայաստանի ֆոնդային բորսային անդամակցության կանոնակարգի, բորսայական առևտրի կանոնների և Հայաստանի ֆոնդային բորսայի հետ կնքած պայմանագրի համաձայն:

4.1.8 Բանկը ֆինանսական շուկաներում գործառնություններն իրականացնում է առևտրային, իրացվելիության կառավարման և անհրաժեշտ մակարդակի ապահովման, արժեթղթերի պորտֆելի ձևավորման և կառավարման, ինչպես նաև ֆինանսական շուկաներում գործունեությունը կանոնակարգող քաղաքականությամբ սահմանված այլ նպատակներով:

4.1.9 Ֆինանսական շուկաներում Բանկի կողմից իրականացվող գործարքներն ամբողջականացնում և «Գործառնական օր» համակարգում ձևակերպում է հաշվապահական հաշվառման վարչության հաշվարկային կենտրոնը (այսուհետ՝ հաշվարկային կենտրոն)՝ ամենօրյա կտրվածքով՝ Կարգով նախատեսված ծանուցագրերի ստացման պահից առավելագույնը 30 րոպեի ընթացքում:

4.2 Արժույթային շուկաներում գործառնությունների իրականացման կանոններն ու պայմանները.

4.2.1 Արտարժույթային փոխարժեքների և կանխիկացման/ապականխիկացման տոկոսադրույքների սահմանման կարգը.

1) Բանկի վարչությունը հաստատում է այն արժույթների ցանկը, որոնք Բանկը կարող է գնանշել ամենօրյա կտրվածքով և որոնցով գործարքների իրականացումը չի հանգեցնի Բանկի բնականոն գործունեությունից շեղմանը:

2) Վարչության կողմից հաստատված ցանկի համաձայն Ստորաբաժանման կողմից յուրաքանչյուր աշխատանքային օր կատարվում է արտարժույթների կանխիկ ու անկանխիկ առք ու վաճառքի փոխարժեքների սահմանում՝ հաշվի առնելով հետևյալ նկատառումները.

- ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքները հաշվարկվում են՝ հիմք ընդունելով արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքները, Բանկի արտարժույթային դիրքը և սպասումները, այլ գործոններ:

- Այլ արտարժույթների գնանշումները կատարվում են ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ և միջազգային շուկայում փոխարժեքների սահմանման պահին տվյալ արտարժույթների, գնանշումների հիման վրա, իսկ այն դեպքում, երբ առկա է ՀՀ ներքին շուկայի ազդեցություն նշված արժույթների փոխարժեքների վրա, ապա հաշվի է առնվում նաև այդ գործոնը:

- Կանխիկ արտարժույթների առք ու վաճառքի փոխարժեքները որոշելիս հաշվի են առնվում նաև կանխիկ արտարժույթի շուկայում ձևավորված փոխարժեքները, Բանկի պահանջարկը տվյալ արտարժույթի նկատմամբ, ինչպես նաև այլ գործոններ:

3) Անկանխիկ արտարժույթների առք ու վաճառքի փոխարժեքները կարող են տարբերվել կանխիկ արտարժույթների առք ու վաճառքի համար սահմանված փոխարժեքներից:

4) Արտարժույթների փոխարժեքները հաստատվում են Կարգի հավելվածով սահմանված ընթացակարգով:

5) Ստորաբաժանումը շաբաթական կտրվածքով սահմանում է արտարժույթի կանխիկացման/ապականխիկացման տոկոսադրույքները (բացառությամբ՝ ԱՄՆ դոլարի, որի դեպքում նշված տոկոսադրույքները սահմանվում են Բանկի սակագներով), որոնք հաստատվում են Կարգի հավելվածով սահմանված ընթացակարգով:

6) Հաստատված տոկոսադրույքները շաբաթվա ընթացքում կարող են փոփոխության ենթարկվել՝ ելնելով արտարժույթի շուկայում ստեղծված իրավիճակից կամ Բանկի պահանջարկից:

7) Կախված իրականացվող գործարքի ծավալից կամ Բանկի հաճախորդի հայտը բավարարելու նպատակահարմարությունից, արտարժույթի կանխիկացման/ապականխիկացման գործարքները կարող են իրականացվել Բանկի կողմից սահմանված տոկոսադրույքների շեղմամբ՝ հիմք ընդունելով շեղում թույլ տալու իրավասություն ունեցող աշխատողների համար Վարչության կողմից հաստատված շեղման առավելագույն սահմանաչափերը:

8) Մինչև նոր փոխարժեքների, կանխիկ կացման/ապականխիկացման տոկոսադրույքների հաստատումը, Բանկի մասնաճյուղերը և կառուցվածքային ստորաբաժանումներն աշխատում են վերջին հաստատված փոխարժեքներով:

4.2.2 Արտարժույթային ներբանկային փոխարկումների իրականացման կարգը.

1) Արտարժույթի փոխանակում կատարելիս՝ Բանկն առաջնորդվում է սահմանված փոխարժեքներով:

2) Առանձին դեպքերում թույլատրվում է գործարքն իրականացնել Բանկի կողմից սահմանված փոխարժեքներից շեղումով՝ Բանկի ներքին իրավական ակտերի պահանջների պահպանմամբ՝ հիմք ընդունելով շեղում թույլ տալու իրավասություն ունեցող աշխատողների համար Վարչության կողմից հաստատված շեղման առավելագույն սահմանաչափերը:

3) Ստորաբաժանման կողմից առանձին գործարքի համար սահմանված փոխարժեքը գործում է փոխարժեքը սահմանողի կողմից նշված ժամանակահատվածում, ընդ որում , ԱՄՆ դոլարի դեպքում սահմանված փոխարժեքը գործում է առավելագույնը 30 րոպե, իսկ այլ արտարժույթների դեպքում՝ առավելագույնը 15 րոպե:

4) Հաշվետեր հաճախորդների համար անկանխիկ արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններն իրականացնում են հաճախորդի հետ «Արտարժույթի առք ու վաճառքի» պայմանագիր կնքելու միջոցով՝ Բանկի վարչության կողմից հաստատված «Արտարժույթի անկանխիկ փոխարկման» ուղեցույցի հիման վրա:

5) Ստորաբաժանումը «Գործառնական օր» համակարգի միջոցով մշտական հսկողություն է իրականացնում Բանկի կողմից կատարված արտարժույթի փոխարկման գործարքների նկատմամբ:

Ընդ որում, Բանկի կողմից սահմանված փոխարժեքներից շեղումով, ինչպես նաև Բանկի վարչության կողմից սահմանված գումարը գերազանցող արտարժույթի փոխանակման գործարքները «Գործառնական օր» համակարգում պարտադիր ենթակա են լրացուցիչ հաստատման Ստորաբաժանման կողմից:

4.2.3 Արտարժույթով միջբանկային գործառնություններ.

Արտարժույթի առք ու վաճառք, ներառյալ՝ սփոթ, կանխիկացման և ապականխիկացման գործառնություններ.

1) Միջբանկային արտարժույթային առք ու վաճառքի և կանխիկացման/ապականխիկացման գործառնություններն իրականացվում են Ստորաբաժանման կողմից գործարքի մյուս կողմի լիազորված անձի հետ համաձայնեցված հետևյալ պայմանների հիման վրա.

- գնվող և վաճառվող կամ կանխիկացվող/ապականխիկացվող արժույթների տեսակները և գումարները.

- փոխարժեքը կամ տոկոսադրույքը.

- գործարքի իրականացման ժամկետները.

- վճարման վավերապայմանները և հերթականությունը:

2) Ոչ ռեզիդենտ բանկերի հետ արտարժույթի կանխիկացման/ապականխիկացման գործարքները կնքվում են՝ համաձայն տվյալ բանկի հետ կնքված թղթադրամային գործարքների կամ այլ համարժեք պայմանագրի:

3) Ոչ ռեզիդենտ բանկերի հետ արտարժույթի առք ու վաճառքի Թող գործառնություններն իրականացվում են մինչև ժամը 16:00-ն, որից հետո կնքվում են Թոմ և ավելի երկար ժամկետով գործարքներ:

4) Ռեզիդենտ բանկերի հետ Թող գործարքները կնքվում են մինչև ժամը 15:15-ը, որից հետո կնքվում են Թոմ գործարքներ:

5) Գլխավոր համաձայնագիր կամ նմանատիպ այլ համաձայնագիր ստորագրած բանկերի հետ արտարժույթի առք ու վաճառքի գործարքների հաստատումը Բանկում իրականացվում է Սվիֆտ (SWIFT) կամ Սի-Բի-Էյ-Նեթ (CBANet) համակարգերի միջոցով՝ վերջիններիս համար սահմանված արարողակարգով: Մնացած բանկերի հետ արտարժույթի առք ու վաճառքի գործարքներն իրականացվում են յուրաքանչյուր գործարքի համար կնքվող արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրի հիման վրա:

6) Բանկը ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերի հետ արտարժույթի փոխանակման գործարքներ իրականացնելիս կարող է կիրառել Ջուտացում (Netting), որի ժամանակ՝

- միևնույն կատարման օրով և միևնույն արժույթով գումարները, որոնք յուրաքանչյուր կողմ պետք է վճարի, գումարվում են.

- եթե մեկ կողմի ընդհանուր պարտավորությունները մեկ արժույթի գծով գերազանցում են մյուս կողմի պարտավորությունները նույն արժույթի գծով, ապա տարբերությունը փոխանցում է այն կողմը, որի պարտավորություններն ավելի մեծ են.

- եթե կողմերի ընդհանուր պարտավորությունները միևնույն արժույթով համընկնում են, ապա դրանք կարգավորվում են առանց միջոցների հոսքերի:

7) Արտարժույթի առք ու վաճառքի, ներառյալ՝ սփոթ, կանխիկացման և ապականխիկացման միջբանկային գործառնությունների ընթացակարգը սահմանվում է Կարգի հավելվածով, իսկ պայմանագրերի ստորագրումը, ինչպես նաև գործարքի կատարումն իրականացվում է Գործառնությունների լիմիտավորման կարգով հաստատված սահմանաչափերի շրջանակներում:

4.2.4 Միջբանկային արտարժույթային Սվոփ գործարքներ.

1) Միջբանկային արտարժույթային սվոփ գործարքներն իրականացվում են Ստորաբաժանման կողմից գործարքի մյուս կողմի լիազորված անձի հետ համաձայնեցված գործարքի հետևյալ հիմնական պայմանների հիման վրա.

- Սվոփ գործարքի տեսակը.
- գնվող և վաճառվող արժույթների տեսակները և գումարները, փոխարժեքը.
- հակադարձ գործարքի փոխարժեքը և/կամ տոկոսադրույքը.
- գործարքի իրականացման ժամկետները.
- վճարման վավերապայմանները և հերթականությունը:

2) Ոչ ռեզիդենտ բանկերի հետ Թոդ գործառնություններն իրականացվում են մինչև ժամը 16:00-ն, որից հետո կնքվում են Թոմ գործարքներ:

3) Ռեզիդենտ բանկերի հետ դրամային Թոդ գործառնությունները կնքվում են մինչև ժամը 15:15-ը, որից հետո կնքվում են Թոմ գործարքներ:

4) Բանկում Գլխավոր համաձայնագիր կամ նմանատիպ այլ համաձայնագիր ստորագրած բանկերի հետ Սվոփ գործարքների հաստատումն իրականացվում է Սվիֆտ

(SWIFT) կամ Սի-Բի-Էյ-Նեթ (CBANet) համակարգերի միջոցով՝ վերջիններիս համար սահմանված արարողակարգով: Մնացած բանկերի հետ սվոփ գործարքներն իրականացվում են պայմանագրի հիման վրա:

5) Միջբանկային արտարժույթային սվոփ գործարքների իրականացման ընթացակարգը սահմանվում է Կարգի հավելվածով, իսկ պայմանագրերի ստորագրումը, ինչպես նաև գործարքի կատարումն իրականացվում է Գործառնությունների լիմիտավորման կարգով հաստատված սահմանաչափերի շրջանակներում:

4.2.5 Ոչ ռեզիդենտ (բանկ չհանդիսացող) հաճախորդների հետ արտարժույթի փոխարկումներ.

1) Ոչ ռեզիդենտ հաճախորդների հետ արտարժույթային փոխարկման գործարքները կնքվում են հեռախոսակապի կամ էլեկտրոնային կապի միջոցով՝ պահպանելով Կարգի 4.1.3 ենթակետի պահանջները, և հաստատվում են հաճախորդների կողմից ուղարկված հայտերի հիման վրա: Փոխարկումները կարող են կատարվել նաև ստացված հայտերի հիման վրա՝ առանց փոխարժեքի վերաբերյալ նախապես պայմանավորվելու: Այդ դեպքում գործարքի փոխարժեքը որոշվում է Ստորաբաժանման կողմից՝ հայտի փաստացի ստացման պահին շուկայական փոխարժեքների հիման վրա՝ անհրաժեշտության դեպքում հայտի ներկայացումը և գործարքի մանրամասները հեռախոսակապի միջոցով լրացուցիչ հաստատելով հաճախորդի հետ:

2) Հաճախորդի կողմից ԱՄՆ դոլարի նկատմամբ ուղղակի/անուղղակի գնանշվող արտարժույթների առքի կամ վաճառքի դեպքում գործարքի փոխարժեքը որոշվում է՝ միջազգային փոխարժեքից համապատասխանաբար հանելով կամ գումարելով Բանկի կողմից ընդունելի համապատասխան մարժան:

3) Ոչ ռեզիդենտ հաճախորդների հետ արտարժույթի փոխարկման գործարքների կնքման ընթացակարգը սահմանվում է Կարգի հավելվածով:

4.2.6 ՀՀ ԿԲ հետ սվոփ գործառնությունների իրականացում.

1) Արտարժույթի ներգրավման/տրամադրման սվոփ գործարքները կնքվում են ՀՀ ԿԲ հետ կնքված համաձայնագրով նախատեսված ձևաչափով Ստորաբաժանման կողմից ներկայացված և Գործառնությունների լիմիտավորման գործընթացը կանոնակարգող ներքին իրավական ակտով սահմանված հաստատված՝ ՀՀ ԿԲ ներկայացվող հայտերի հիման վրա՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԲ հետ կնքված՝ տվյալ ոլորտը կանոնակարգող պայմանագրերը/համաձայնագրերը:

2) Բանկը հայտը ՀՀ ԿԲ է ներկայացնում ՀՀ ԿԲ հայտարարության մեջ նշված ժամկետում:

3) Հայտերը ներկայացվում են Սի-Բի-Էյ-Նեթ (CBANet) համակարգչային ցանցի միջոցով՝ վերջինիս համար սահմանված արարողակարգով կամ թղթային եղանակով (երկու օրինակից):

4) ՀՀ ԿԲ հետ սվոփ գործարքների կնքման ընթացակարգը սահմանվում է Կարգի հավելվածով:

4.3 Թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորների առք ու վաճառքի իրականացման կանոններն ու պայմանները.

4.3.1 Թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորների գնանշման և գործարքների իրականացման կանոններն ու պայմանները.

1) Բանկում առկա թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորների գները ձևավորվում են Ստորաբաժանման կողմից և հաստատվում են Կարգի հավելվածով սահմանված ընթացակարգով:

2) Բանկում առկա ստանդարտացված ձուլակտորների գնանշումը Ստորաբաժանման կողմից յուրաքանչյուր աշխատանքային օր կատարվում է՝ հիմք ընդունելով հետևյալ գործոնները.

- տեղական շուկայում ձևավորված ստանդարտացված ձուլակտորների գները.
- միջազգային շուկայում ձևավորված գները, ինչպես նաև տվյալ գների կարճաժամկետ տատանումները.
- ստանդարտացված ձուլակտորների նկատմամբ առկա պահանջարկը.
- ստանդարտացված ձուլակտորների ներմուծման հետ կապված բոլոր ծախսերը.
- այլ գործոններ:

3) Մինչև Ստորաբաժանման կողմից թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորների նոր գներ հաստատելը Բանկն աշխատում է վերջին հաստատված գներով:

4) Բանկում հաճախորդների կողմից պահանջվող անհրաժեշտ ձուլակտորների առկայության դեպքում հաճախորդներին վաճառվում է առկա ձուլակտորն անմիջապես՝ շրջանցելով պատվիրման գործընթացը:

5) Թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորների գնանշման և գործարքների կատարման ընթացակարգը սահմանվում է Կարգի հավելվածով:

4.4 Արժեթղթերի շուկայում գործառնությունների իրականացման կանոններն ու պայմանները.

4.4.1 Բանկն Արժեթղթերի շուկայում իրականացնում է գործառնություններ՝ հաճախորդների սպասարկման կամ Բանկի սեփական նպատակներից ելնելով: Ընդ որում, Խորհուրդը, Բանկի ֆինանսական շուկաներում գործունեությունը կանոնակարգող քաղաքականությամբ կարող է սահմանափակել Կարգի սույն կետով սահմանված գործառնությունների իրականացումը:

4.4.2 Բրոքերային ծառայությունների մատուցում.

1) Բանկում բրոքերային ծառայություններ մատուցում է Ստորաբաժանումը՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն Ստորաբաժանման որակավորված աշխատողների միջոցով: Բրոքերային ծառայությունների մատուցման դիմաց գանձվող սակագների չափերը սահմանվում են Վարչության կողմից հաստատվող Բանկի սակագներով:

2) Բանկը Հաճախորդին բրոքերային ծառայությունների մատուցումն իրականացնում է՝ սպասարկման գործընթացը կառուցելով օրենսդրությամբ և Կարգի սկզբունքներին համապատասխան Վարչության կողմից հաստատված կանոններով սահմանված կարգով բրոքերային ծառայությունների և արժեթղթերի վերաբերյալ նախապես Հաճախորդի փորձի գնահատման արդյունքների հիման վրա՝ գնահատման արդյունքները համաձայնեցնելով հաճախորդի հետ և դրան համապատասխան ապահովելով հաճախորդի հետ հաղորդակցման գործընթացը:

3) Բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակներում հաշվարկների իրականացման նպատակով Բանկը հաճախորդների համար բացում է բանկային և դեպո հաշիվներ՝ պահպանելով Կարգի հավելվածներով սահմանված ընթացակարգերը և նշված գործընթացները կանոնակարգող Բանկի այլ ներքին իրավական ակտերով սահմանված պահանջները:

4) Հաճախորդի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով գործարքների կնքման համար հիմք է հանդիսանում Բանկի և հաճախորդի միջև կնքված բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա թղթային և/կամ էլեկտրոնային եղանակներով Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերը՝ Կարգի սկզբունքներին համապատասխան Վարչության կողմից հաստատված կանոններով սահմանված ձևով:

5) Բանկի կողմից բրոքերային գործարքները կարող են կնքվել՝ Արժեթղթի գնման/վաճառքի առաջարկ ներկայացնելու միջոցով՝

- Կարգավորվող շուկայում՝ Կարգավորվող շուկայի կողմից սահմանված կանոններին համապատասխան.

- Չկարգավորվող շուկայում՝ Արժեթղթերի շուկան կարգավորող ՀՀ և այն երկրի օրենսդրության համաձայն, որտեղ կնքվում է այդ գործարքը:

6) Հաճախորդի Պատվերը կատարելու համար Բանկն իր հայեցողությամբ կարող է ներգրավել նաև այլ կազմակերպություններ, այդ թվում՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, ինչպես նաև՝ օգտվել միջազգային և տեղական շուկաներում այլ կազմակերպությունների կողմից տրամադրվող էլեկտրոնային առևտրային համակարգերից:

7) Պատվերների ընդունման, կատարման, փոփոխման, հետ կանչման, մերժման ընթացակարգը և մանրամասն պահանջները սահմանվում են Կարգի պահանջների հիման

վրա Վարչության կողմից հաստատվող համապատասխան կանոններով:

8) Հաճախորդի Պատվերի էական պայմանների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է հաշվառման համապատասխան Բրոքերի կողմից վարվող Պատվերների հաշվառման էլեկտրոնային գրանցամատյանում:

9) Հաճախորդի Պատվերների կատարման վերաբերյալ կազմվում և Հաճախորդներին են ներկայացվում հաշվետվություններ՝ Հաճախորդի հետ կնքված պայմանագրի դրույթներին համապատասխան՝ Կարգի պահանջների հիման վրա Վարչության կողմից հաստատվող համապատասխան կանոններով սահմանված կարգով:

4.4.3 Պահառության ծառայությունների մատուցման կանոններն ու պայմանները.

1) Բանկը «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան հաճախորդի հետ կնքված Պահառության պայմանագրի հիման վրա մատուցում է հետևյալ ծառայությունները.

- հաճախորդի արժեթղթերի դեպո հաշվի բացում և վարում՝ գրանցելով այդ հաշվի հետ կապված յուրաքանչյուր գործարքի ժամկետն ու էական պայմանները.

- հաճախորդի արժեթղթերի նկատմամբ իրավունքների գրանցում.

- որպես հաճախորդի արժեթղթերի անվանատեր՝ օրենսդրությամբ թույլատրվող գործողությունների իրականացում.

- արժեթղթերից բխող իրավունքների իրականացման նպատակով թողարկողի կամ այլ պահառուի կողմից հաճախորդին, ինչպես նաև հաճախորդի կողմից թողարկողին կամ այլ պահառուին տեղեկությունների և փաստաթղթերի փոխանցում.

- արժեթղթերի նկատմամբ և արժեթղթերից բխող սեփականության և այլ գույքային իրավունքները հաշվառելու, այդ իրավունքներն ամրագրելու, փոխանցելու, դադարեցնելու և այլ գործառնությունները գրանցելու հետ կապված այլ ծառայությունների մատուցում,

- Հաճախորդներին լրացուցիչ այլ ծառայությունների մատուցում՝ ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

2) Պահառության հանձնված արժեթղթերի նկատմամբ Հաճախորդի իրավունքների իրականացման նպատակով Բանկը՝

- ձեռնարկում է անհրաժեշտ գործողություններ ապահովելու բարեխիղճ ձեռք բերողի շահերի պաշտպանությունը և կանխարգելելու նրան պատկանող արժեթղթերի առգրավումը.

- համապատասխան հանձնարարականի հիման վրա ապահովում է արժեթղթերի փոխանցումը ինչպես իր մոտ վարվող դեպո հաշվի, այնպես էլ այլ դեպո հաշվի վրա.

- համապատասխան հանձնարարականի հիման վրա ապահովում է արժեթղթերի փոխանցումը արժեթղթերի սեփականատերերի ռեեստրում Հաճախորդի անձնական հաշվի

վրա.

- ապահովում է արժեթղթերի ռեեստրի վարման համար պատասխանատուի և այլ անձանց կողմից փոխանցվող արժեթղթերի ընդունումը.

- Պահառության հանձնված արժեթղթերով կատարված գործառնությունների վերաբերյալ հաշվետվություններ է տրամադրում Հաճախորդին կամ նրա լիազորված ներկայացուցչին.

- իրականացնում է օրենսդրությամբ, Բանկի ներքին իրավական ակտերով և Հաճախորդի հետ կնքված պայմանագրով սահմանված այլ գործողություններ:

3) Արժեթղթերի պահառության ծառայությունների մատուցման դիմաց գանձվող սակագների չափերը սահմանվում են Վարչության կողմից հաստատվող Բանկի սակագներով:

4) Բանկին պահառության հանձնված արժեթղթերի հաշվառումն իրականացվում է ՀՀ ԿԲ Խորհրդի որոշմամբ հաստատված «Արժեթղթերի պահառության գործունեությունը» կանոնակարգ 33-ով սահմանված պահանջների կիրառմամբ: Բանկին պահառության հանձնված արժեթղթերի հաշվառումն ապահովելու համար Բանկը վարում է արժեթղթերի հաշիվներ, արժեթղթերի հաշվառման քարտեր, մատյաններ և արժեթղթերի հաշվառմանն առնչվող այլ փաստաթղթեր՝ Կարգի պահանջների հիման վրա Վարչության կողմից հաստատվող համապատասխան կանոններով սահմանված կարգով:

5) Հաճախորդի դեպո հաշվի հետ յուրաքանչյուր պահառուական գործառնության կատարման ավարտին կազմվում և տրամադրվում է պահառուական գործառնության կատարման մասին հաշվետվություն՝ Հաճախորդի հետ կնքված պայմանագրի դրույթներին համապատասխան՝ Կարգի պահանջների հիման վրա Վարչության կողմից հաստատվող համապատասխան կանոններով սահմանված կարգով:

6) Արժեթղթերի պահառության ծառայությունների շրջանակներում իրականացվող գործառնությունների մանրամասն ընթացակարգերը սահմանվում են Կարգի պահանջների հիման վրա Վարչության կողմից հաստատվող համապատասխան կանոններով:

4.4.4 Պետական պարտատոմսերի շուկայում Հաճախորդներին ծառայությունների մատուցման կանոններն ու պայմանները.

1) Բանկը Պետական պարտատոմսերի շուկայում ծառայություններ է մատուցում ֆիզիկական, իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձանց: Վերջիններիս հետ հարաբերությունների հաստատման բանակցությունները վարվում են Ստորաբաժանման կողմից՝ մյուս կողմի լիազորված անձանց միջոցով (առկայության դեպքում):

2) Բանկը Պետական պարտատոմսերի շուկայում մատուցում է ծառայությունների հետևյալ տեսակները.

- Պետական պարտատոմսերի առք/վաճառք.

- Պետական պարտատոմսերի գրավադրման հետ կապված գործառնությունների իրականացում.

- Պետական պարտատոմսերի (այդ թվում՝ գրավադրված) դիմաց արժեկտրոնների, տոկոսների վճարման և վերջիններիս մարման հետ կապված գործառնությունների իրականացում:

3) Պետական պարտատոմսերի հետ կապված ծառայությունների մատուցման դիմաց գանձվող սակագների չափերը սահմանվում են Վարչության կողմից հաստատվող Բանկի սակագներով:

4) Պետական պարտատոմսերի հետ կապված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ նախապայման է դիտարկվում հաճախորդի բանկային հաշվի առկայությունը: Վերջինիս բացակայության դեպքում նախ և առաջ հաճախորդի անունով բացվում է բանկային հաշիվ՝ համաձայն Բանկում բանկային հաշիվների բացման, վարման և փակման գործընթացը կանոնակարգող ներքին իրավական ակտի:

5) Հաճախորդներին Պետական պարտատոմսերի հետ կապված ծառայությունները մատուցվում են Բանկի և հաճախորդի միջև կնքված Պետական պարտատոմսերի Դեպո հաշվի բացման և սպասարկման պայմանագրի հիման վրա՝ վերջինիս դրույթներին համապատասխան Դեպո հաշիվ բացելու, հաճախորդի պարտատոմսերից բխող իրավունքների հաշվառման և փոխանցման հետ կապված Դեպո հաշիվների վրա համապատասխան գրառումներ կատարելու, հաճախորդներին պարտատոմսերով սահմանված իրավունքների իրականացմանն ուղղված ծառայություններ մատուցելու միջոցով:

6) Բանկի կողմից հաճախորդի հանձնարարությամբ Պետական պարտատոմսերով գործառնություններն իրականացվում են թղթային և/կամ էլեկտրոնային եղանակով Բանկ ներկայացված Դեպո հանձնարարականների հիման վրա, որոնք պետք է բավարարեն ՀՀ ԿԲ Խորհրդի կողմից հաստատված «Պետական պարտատոմսերով գործառնություններում կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների մասին» կարգով սահմանված պահանջներին:

7) Դեպո հանձնարարականները ենթակա են կատարման դրանցում նշված աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև ժամը 15:45, եթե հանձնարարականն ստացվել է աշխատանքային օրվա մինչև 15:15 ընկած ժամանակահատվածում: Նշված ժամանակից ուշ ներկայացված հանձնարարականները կատարվում են հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև ժամը 10:00:

8) Պետական պարտատոմսերի դիմաց տոկոսների, արժեկտրոնի վճարումը, ինչպես նաև պարտատոմսի վերջնական մարումը կատարվում է Կարգի սկզբունքներին

համապատասխան Վարչության կողմից հաստատված կանոններով սահմանված ընթացակարգով՝ հաճախորդի բոլոր Դեպո հաշիվներում առկա՝ մինևս թողարկման համարով Պետական պարտատոմսերի համար ՀՀ ԿԲ կողմից հայտարարված պայմաններին համապատասխան՝ Պարտատոմսերի դիմաց տոկոսների, արժեկտրոնների վճարման և վերջնական մարման օրը մինչև տվյալ գործառնության կատարման ավարտը բացառելով տվյալ դասի Պետական պարտատոմսերով այլ տեսակի գործառնությունների կատարումը: Դեպո գործարքի առարկա հանդիսացող Պետական պարտատոմսերի գծով արժեկտրոնի կամ տոկոսի գումարի վճարումն իրականացվում է՝ ռեպո գործարքի մարման օրը:

9) Հաճախորդի պարտատոմսերով գրավի հետ կապված գործառնություններն իրականացվում են՝ ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունների իրականացման կարգի պահանջների պահպանմամբ՝ գրավադրված պարտատոմսերի հաշվառումն իրականացնելով ըստ առանձին գրավատուների՝ վերջիններիս «գրավով սահմանափակված» դեպո հաշիվներով և գրավի առարկա հանդիսացող պարտատոմսերի թողարկման համարների:

10) Հաճախորդին կամ նրա լիազորված ներկայացուցչին դեպո հաշվի ցանկացած շարժի դեպքում տրամադրվում է քաղվածք՝ դեպո հաշվի բացման և սպասարկման պայմանագրի դրույթներին համապատասխան՝ Կարգի հավելվածներով սահմանված կարգով:

11) Հաճախորդներին տրամադրվում են նաև սահմանված ձևաչափով տեղեկանքներ, Պետական պարտատոմսերով իրականացված գործարքների վերաբերյալ հաշվետվություններ կամ հաստատումներ՝ ըստ վերջիններիս պահանջի՝ Պետական պարտատոմսերի դեպո հաշվի բացման և սպասարկման պայմանագրի դրույթների համաձայն Կարգի պահանջների հիման վրա Վարչության կողմից հաստատվող համապատասխան կանոններով սահմանված կարգով:

12) Պետական պարտատոմսերի շուկայում գործառնությունների իրականացման, մանրամասն ընթացակարգերը սահմանվում են Կարգի պահանջների հիման վրա Վարչության կողմից հաստատվող համապատասխան կանոններով:

4.4.5 Բանկի կողմից Պետական պարտատոմսերի շուկայում գործարքների իրականացման կանոնները և պայմանները.

1) Պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխմանը Բանկի մասնակցության որոշումը կայացվում է Ստորաբաժանման կողմից կազմված՝ առաջնային տեղաբաշխմանը մասնակցության նախնական պլանի հիման վրա՝ հիմք ընդունելով Բանկի կողմից հաստատված ռազմավարությունը, տարեկան նախահաշիվը, ներդրումային

քաղաքականությունը, տվյալ ամսվա ակնկալվող իրացվելիության մակարդակը, պարտատոմսերի պորտֆելի մարման ժամանակացույցը, ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից ստացված՝ սպասվելիք աճուրդների վերաբերյալ տեղեկատվությունը:

2) Պետական պարտատոմսերի հետզնման աճուրդներին մասնակցության վերաբերյալ որոշումները կայացվում են՝ հիմք ընդունելով Պետական պարտատոմսերի հետզնման օրը Բանկի և Բանկի հաճախորդների մոտ առկա՝ հետզնվող ՊՊ-ների ծավալների, գործարքի կանխատեսվող եկամտաբերության մասին տեղեկատվությունը և հաշվի առնելով Բանկի ռեսուրսների ծավալները:

3) Պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման/հետզնման աճուրդներն Բանկի մասնակցության նպատակահարմարության դեպքում Գլխավոր գանձապետը բանակցում է Վարչության նախագահի հետ՝ աճուրդին մասնակցության վերաբերյալ՝ համաձայնեցնելով նախատեսվող գործարքի ծավալը և տոկոսադրույքը:

4) Պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում Բանկը ՀՀ Պետական պարտատոմսերի շուկայի դիլերի գործառույթներն իրականացնում է՝ համաձայն ՀՀ ԿԲ հետ կնքված ՀՀ ՊՊ առքի ու վաճառքի գործարքների իրականացման համաձայնագրի:

5) Առաջնային և երկրորդային շուկաներում գործարքների իրականացման, աճուրդներին մասնակցության մանրամասն ընթացակարգերը սահմանվում են Կարգի հավելվածներով:

4.4.6 Կորպորատիվ արժեթղթերի շուկայում իրականացվող գործառնությունների կանոններն ու պայմանները.

1) Կորպորատիվ արժեթղթերի շուկայում ներդրումները կատարվում են Ստորաբաժանման կողմից «ՆԱՍԴԱԲ ՕԷՄԷԲՍ Արմենիա» ֆոնդային բորսայում, այլ շուկաներում գնանշվող արժեթղթերի հետազոտության արդյունքների հիման վրա: ՀՀ կորպորատիվ արժեթղթերի շուկայի հետազոտության հիմքում դրվում է ՀՀ ԿԲ կողմից բարձր վարկանիշ ունեցող ձեռնարկությունների արժեթղթերի՝ Հայաստանի ֆոնդային բորսայում գնանշումները, նախորդ երեք ամիսների ընթացքում այդ արժեթղթերով իրականացված գործարքների ծավալների և եկամտաբերության մասին տեղեկատվությունը, ՀՀ ԿԲ կողմից յուրաքանչյուր օր բանկերին ներկայացվող բարձր վարկանիշ ունեցող ձեռնարկությունների կողմից թողարկված պարտատոմսերի գնանշումները:

2) Այլ շուկաներում ներդրումներ իրականացնելիս հաշվի է առնվում շուկայի կարգավորվածության, թողարկողի գործունեության, վարկանիշների, առնվազն վերջին վեց ամիսների կտրվածքով արժեթղթերի եկամտաբերության փոփոխման, կանխատեսվող միտումների, իրականացված գործարքների ծավալների ուսումնասիրության արդյունքները:

3) Կորպորատիվ արժեթղթերում ներդրումների վերաբերյալ որոշումներն ընդունվում են Գլխավոր գանձապետի ներկայացմամբ՝ Վարչության նախագահի կողմից՝ Բանկի կողմից սահմանված դեպքերում՝ ստանալով նաև Խորհրդի համաձայնությունը: Արժեթղթերում ներդրումների համար պարտադիր է նաև Բանկի ռիսկերի կառավարման ստորաբաժանման եզրակացությունը:

4) Կորպորատիվ արժեթղթերի շուկայում գործառնությունների կատարման ընթացակարգը սահմանվում է Կարգի հավելվածով:

4.4.7 Ռեպո/հակադարձ ռեպո գործարքների իրականացման կանոններն ու պայմանները.

1) Ռեպո/հակադարձ ռեպո համաձայնագրի առարկա են հանդիսանում ՀՀ Պետական պարտատոմսերը: Այլ արժեթղթերով Ռեպո համաձայնագրեր կնքվում են բացառապես Վարչության նախագահի համաձայնությամբ:

2) Ռեպո/հակադարձ ռեպո համաձայնագրերը Բանկի կողմից օգտագործվում են կարճաժամկետ իրացվելիության կառավարման կամ առևտրային նպատակներով:

3) Հակադարձ ռեպո գործարքների կնքման համար հիմք են հանդիսանում ԱՊԿԿ-ի կողմից շաբաթական կտրվածքով սահմանված տոկոսադրույքները և Կարգի հավելվածներով սահմանված պարտատոմսերի նկատմամբ պահանջները: Սահմանված պայմաններից շեղումով գործարքներն իրականացվում են բացառապես Վարչության նախագահի հաստատմամբ:

4) Հակադարձ ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքները շաբաթական կտրվածքով հաստատվում են Բանկի ԱՊԿԿ կողմից, որի ձևավորման հիմքում դրվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող տոկոսադրույքը, նախորդ շաբաթվա դրությամբ ՀՀ Ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքները, Պետական պարտատոմսերի շուկայի վիճակը և արժեթղթերի գրավադրմամբ տրամադրվող վարկերի տոկոսադրույքները, ինչպես նաև Ստորաբաժանման աշխատողների կողմից կատարված շուկայի վերլուծությունները, կանխատեսումները և սպասումները:

5) Եթե կողմերի միջև կնքված չէ Գլխավոր համաձայնագիր, ապա գործարքն իրականացվում է պայմանագրային հիմունքներով:

6) Ռեպո գործարքների փոխհաշվարկներն իրականացվում են «Առաքում վճարման դիմաց (DVP)» սկզբունքով, երբ գործարքի կողմերի միջև արժեթղթերի փոխանցումներն միաժամանակ ուղեկցվում են կողմերի միջև դրամական միջոցների փոխանցմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հաճախորդի պարտատոմսերը գտնվում են Բանկում սպասարկվող Դեպո հաշվին: Հակադարձ ռեպո գործարքների դեպքում «առաքում վճարման դիմաց (DVP)» սկզբունքով փոխհաշվարկի իրականացման անհնարինության պարագայում հնարավոր է հակադարձ ռեպո գործարքների կնքումը այլ եղանակով,

մասնավորապես՝ Ազատ առաքման սկզբունքով, որի դեպքում դրամական հաշվարկները հաջորդում են արժեթղթերի փոխանցման գործարքին:

7) Ռեպո/հակադարձ ռեպո գործարքների կատարման ընթացակարգը սահմանվում է Կարգի հավելվածով:

4.5 Դրամային շուկաներում գործառնությունների իրականացման կանոններն ու պայմաններն.

4.5.1 Ավանդի/վարկի ներգրավման/տրամադրման մասին որոշման կայացումը.

1) Բանկը դրամային գործառնություններ է իրականացնում բանկերի և ոչ բանկ ֆինանսավարկային կազմակերպությունների հետ:

2) Առևտրային բանկերին և ոչ բանկ ֆինանսավարկային կազմակերպություններին ավանդ/վարկ ներգրավելու/տեղաբաշխելու վերաբերյալ որոշումն ընդունվում է Վարչության նախագահի կողմից՝ հաշվի առնելով Բանկում իրացվելիության կառավարման խնդիրները և դրամային շուկայում տիրող իրավիճակը: ՀՀ ԿԲ-ում ավանդների տեղաբաշխման վերաբերյալ որոշումները կայացվում են գործառնությունների լիմիտավորման գործընթացը կանոնակարգող Բանկի ներքին իրավական ակտին համապատասխան:

3) Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին ավանդ/վարկ ներգրավելիս/տրամադրելիս՝ գործընկերոջ ընտրությունն իրականացնում է Ստորաբաժանման աշխատողը՝ համաձայնեցնելով Գլխավոր գանձապետի և Վարչության նախագահի հետ՝ հիմք ընդունելով միջբանկային դրամային շուկայում առաջարկվող տոկոսադրույքները և Բանկի իրացվելիության նորմատիվները:

4) Ստորաբաժանման կողմից, Վարչության նախագահի համապատասխան հաստատման հիման վրա, կարող են կնքվել գործարքներ նաև «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ֆոնդային բորսայի և թղթակից բանկերի կողմից տրամադրված նմանատիպ հարթակներում: «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ֆոնդային բորսայի գործարքների կնքումը, քլիրինգը կանոնակարգվում է ֆոնդային բորսայի և ՀՀ ԿԲ համապատասխան իրավական ակտերով:

4.5.2 Գործարքի ապահովությունը.

1) Բանկի կողմից բանկերին միջոցների տրամադրման դեպքում գրավ են ընդունվում տվյալ բանկին սեփականության իրավունքով պատկանող բարձր իրացվելի ակտիվները, որոնք չեն գերազանցում վարկային ռիսկի առավելագույն չափը: Առանձին դեպքերում Վարչության նախագահի հաստատմամբ կարող են տրամադրվել առանց ապահովության վարկեր՝ հիմք ընդունելով բանկերի համար հաստատված ռիսկի առավելագույն սահմանաչափը:

2) Բանկում ոչ բանկ ֆինանսական հաստատությունների հետ առանց ապահովվածության գործարքների սահմանաչափեր չեն սահմանվում: Այդպիսի կազմակերպությունների հետ գործարքների դեպքում ապահովության միջոց են ընդունվում

Ֆինանսական հաստատությանը սեփականության իրավունքով պատկանող ինչպես բարձր իրացվելի, այնպես էլ այլ ակտիվներ: ՀՀ ԿԲ կանոնակարգ 2-ի սահմանմանը համապատասխանող բարձր իրացվելի ակտիվների դեպքում գրավ/ոչսկի առավելագույն չափ գործակցի նվազագույն սահմանը 100 տոկոս է, այլ ակտիվների դեպքում՝ 120 տոկոս:

4.5.3 Դրամային շուկաներում գործառնությունների կատարման ընթացակարգը սահմանվում է Կարգի հավելվածով:

4.6 Ֆինանսական շուկաներում գործառնությունների վերաբերյալ գրանցումների վարման կանոնները և պայմանները.

4.6.1 Ստորաբաժանումն օրական կտրվածքով վարում է իր կողմից իրականացված արտարժույթի առքուվաճառքի գործարքների և փողի շուկայում իրականացվող գործարքների վերաբերյալ գրանցամատյաններ, որոնք օրական կտրվածքով ենթակա են ստուգման և հաստատման՝ Կարգի հավելվածներով սահմանված ընթացակարգով:

4.6.2 Գրանցամատյանների վերանայման և/կամ վարման անհրաժեշտությունը քննարկվում է առնվազն տարեկան կտրվածքով, ինչպես նաև նոր ֆինանսական գործիք ներդնելու դեպքում:

5. ԿԱՐԳԸ ԿՐՈՂ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

5.1 Կարգով սահմանված պահանջները ենթակա են կատարման Բանկի կողմից ֆինանսական շուկաներում գործունեության իրականացման գործընթացի մասնակից բոլոր ստորաբաժանումների և աշխատողների/ղեկավարների կողմից:

5.2 Պատասխանատվությունը Կարգի պահանջների ապահովման գծով.

- Ֆինանսական շուկաներում Բանկի կողմից իրականացվող գործունեությունն օրենդության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան իրականացնելու համար պատասխանատվություն է կրում Ստորաբաժանումը:

- Կարգով սահմանված գործառնությունների հաշվապահական հաշվառման ձևակերպումների և պայմանագրերի կազմման համար պատասխանատվություն է կրում հաշվարկային կենտրոնը:

- Բանկում ընդհանուր իրացվելիության և անկանխիկ ֆինանսական հոսքերի արդյունավետ կառավարման համար պատասխանատվություն է կրում Բանկի անկանխիկ դրամական հոսքերի և կանխիկ կառավարման ստորաբաժանումը:

5.3 Կարգի կիրառման նկատմամբ ընթացիկ հսկողություն է իրականացնում Գլխավոր գանձապետը:

5.4 Կարգի կիրառման նկատմամբ ընդհանուր վերահսկողություն են իրականացնում Բանկի հսկողական գործառնություններ իրականացնող ստորաբաժանումները: